


պսակի խորհրդի այդ ամենաէական մասը:

Այս անելուց յետոյ՝ մենք հաւատացած ենք, որ բացի յիշածս երկու դէպքերից՝ անյայտ բացակայելուց և իրաւագուրկ մշտնջենական աքսորից՝ ուրիշ դէպքեր չենք տեսնալ ամուսնութիւնը լուծելու. մի բան, որ ըստ Աւետարանի մեր իրաւունքից միանգամայն վեր է:

Կարծում ենք, որ այս ճանապարհով միայն մենք կը վերադառնանք առողջ և ուժեղ ընտանիքի, անձնուէր ծնողական յարկի, մի ժողովրդի անմահութեան ամենաուժեղ հիմունքի և առաջնակարգ պայմանի: Հակառակ դէպքում մենք ամուսնաթողներից կունենանք ամենօրեայ ամուսնաթողներ, աւազի վերայ հիմնած ընտանեկան կեանքն ու ձևական—անուանական ծնողներ, որոնք անընդունակ կլինեն Քրիստոսի իդէալն ըմբռնելու, և զուրկ նրան ձգտելու, նրանով առաջնորդուելու կարողութիւնից, որի հետեանքը մի միայն գերեզման է, ազգային գերեզման և ուրիշ ոչինչ:

Ե. Ճ. Վ. Մ.



## ՓԱՐԻՍԵՑԻՆ ԵՒ ՄԱՔՍԱԻՈՐԸ

Ղուկ. ԺԸ. 9—15.

«Փորձեա զիս Աստուած և ծանիր զսիրտ իմ, քննեա զիս և ծանիր զչաւիղս իմ, և տես թէ իցեն անօրէնութիւնք ի ճանապարհս իմ, և առաջնորդեա ինձ ի ճանապարհս քո յաւիտենիցս: Սաղմ. ՃԼԸ. 23—24:

Քրիստոս այս առակն ասել է աչքի առաջ ունենալով այն մարդոց, որոնք իրենք են իրենց չափում և համեատ ու արդար գտնում, իսկ ուրիշներին արհամարհում: Այդ

առական Քրիստոս միևնոյն ժամանակ սրատասխանում է այն հարցին թէ ո՞ր իսկապէս իբրեւ արդար՝ Աստուծոյ առաջ կանգնելու յոյսը պիտի ունենայ:

Բոլոր այն հարցերից, որ մարդու մտքով անցնում են ամենաճանրակշիւ և կարեւոր հարցն է այս: Մի հարց, որից կախում է մեր յաւիտենական ապագան և միևնոյն ժամանակ հոգւոյ խաղաղութիւնը՝ այս աշխարհում: Եթէ մենք մեր պարաքը ճշտութեամբ ենք կատարել և Աստուծոյ կողմից շնորհքի արժանացել, թող մարդիկ ինչպէս կամենան մեզ քննադատեն մենք ձեռք բերած կլինենք այն, ինչ որ փութորկի ժամանակ մեզ մխիթարել և մեր սիրտը խաղաղ պահել կարող է: Իւրիւր էթէ մեր հաշիւը մեր Տիրոջ հետ փառ է, եթէ նա բարկացած է մեզ վերայ, այն ժամանակ ոչ մի փառք — ոչ մարդկանցից սաացածը և ոչ անձամբ ձեռք բերածը — մեզ չի կարող օգնել: Այդպիսի փառքը նման կլինի ծղօտի՝ որին քամին տարութերում է, փայտի, խոտի, տաշեղի — որը դատաստանի կրակի մէջ պիտի այրուի, ոչնչանայ: Արդեօք, եթէ մարդ, քո ամենազլիստ, որ հոգսերից մէկն այն է, որ զու միայն քո Աստուծոյ կամքը կատարես և մեղքերից ազատ նորա առաջ կանգնես:

Մենք մարդիկս, մեր ժամանակի որդիքը, թէ ինչ հոգսերով ենք զբաղուած՝ շատ լաւ գիտենք: Ո՛րքան յաճախ մեր սիրտը խռովայոյզ մտածմունքներով, ահ ու վախով տանջւում է: Մեզ տանջում են հոգսերը մեր կանանց ու որդւոց, տան և օրական հացի համար, հոգսեր մեր և մեր բայնոց երկրաւոր ապագայի, հոգսեր նաև մեր երկրաւոր առողջութեան համար: Եթէ այդ հոգսերի նոյն իսկ մի տասերորդ մասը նուիրուած լինէր մեր յաւիտենական ապագային, Աստուծոյ և Փրկչի ոգորմութեանը, մեր հոգւոյ խաղաղութեանը: Բայց իսկապէս մենք շատ անհոգ ենք և չենք ունենում ոչ տանջանքով լի օրեր, և ոչ անքուն գիշերներ: Աստուծոյ մտածում է մարդ, այդքան խիստ չի լինիլ: Մեր ամենօրեայ խորհրդածութեանց մէջ Աստուած երկրորդական տեղն է բռնում: Այո՛, նորան հաղարաւորներն են մոռացել և հաղարաւորներն ուրացել: Իսկ յաւի-

տեղական ապագան: Ո՞վ կհոգայ այդ ապագայի համար, միթէ մարդը, որ ներկայիս բաղդի պտուղները ճաշակելուց յետոյ, ցանկանում է միայն և միայն այդ երկրաւոր բաղդը: Միթէ այս խելացի՞ բան է, և մենք նման չե՞նք երեխաներին, որ վաղուանը աչքից թողնելով՝ միայն այսօրուան համար ենք մտածում:

Այ դժ քեզ այնքան մօտ չէ իւր զօրութեամբ ու իշխանութեամբ, ո՞վ անհոգ մարդ, որչափ քո Աստուածդ, և քո մտածմունքներդ պատճառ չպիտի ունենան ուրիշ որ և է բանով զբաղուելու քան նորանով, որի ձեռքն է գտնուում քո կեանքդ, որի վճիռը քո գլխիդ կամ օրհնութիւն, կամ անէծք, կեանք կամ մահ կը բերէ: Երկիւղ ունեցիր՝ նորա բարկութիւնից և մի մտածիր փարիսեցու նման, որպէս թէ նա քեզանով զբաղուելու ժամանակ չի ունենայ: Վերեւ բերուած փարիսեցու և մաքսաւորի առակի սրտաշարժ անտշառութիւնը հէնց նորա մէջն է, որ այնտեղ անպէտք է համարուում Աստուծոյ կողմից այն մարդը, ով որ ինքն իրեն իւր ժամանակի ամենալաւերի շարքն է դասում և այստեղ ամենքից մեծարուում: Այսպիսով կարող է մարդ սեփական մտածմունքներով սխալանքի մէջ ընկնել: Թող ուրեմն մեր սեփական սրտի ձայնը և ժողովրդի կարծիքը մեզ կանոն չլինեն, այլ թող մեզ առաջնորդէ միայն այն ձայնը, որը միանգամ մեզ դատաւճիռ պիտի կարդայ: Մենք պէտք է մեզ փորձենք փարիսեցու օրինակով, որ ինքն Աստուած մեր առաջ է դնում, և տեսնենք, արդեօք նման չենք նորան որ և է բանով:

Փարիսեցիին տաճարի մէջ—արդեօք նա քո պատկերդ է, ով մարդ, ինչպէս որ նա կանգնած է—մարդասիրութիւնից զուրկ, սիրուց դատարկ:

Սա մի առակ է, որ մեր առաջ պատկերացնում է թեպէտ ոչ իսկական եղելութիւն, բայց կատարեալ ճշմարտութիւն: Տիրոջ նկարագրած փարիսեցու նման հազարաւորները կային երկրի վերայ իրենցով շլացած: Նախանձախնդիր օրէնքի պաշտպան մարգարէների, ջերմեռանդութեամբ տաճար յաճախող, սաղուկեցւոյ աղատողի էութեան

Թշնամի, հռովմական ճնշմանց դէմ ազգային ինքնուրոյնութեան զրօշակը բարձր կրող և այդ բոլորի պատճառով իբրև հոգևոր առաջնորդներ շատ մեծարուած և այսպէս մտածում էին, որ, իբրև Արքահամի իսկական որդիք, երկնքում նոցա մի պատուարժան տեղ ևս վայել է: Նոյն իսկ երկրիս վերայ այդ տեղը նոցանից չէր պահասում: Բայց Աստուծոյ առաջ այն արհամարուած և դատապարտուած մաքսաւորը, որ իւր կուրծքն էր ծեծում, և իւր անկեալ վիճակի համար խորին ամօթխածութիւնից նոյն իսկ աչքերը երկնք բարձրացնել չէր համարձակուում, աւելի լաւ էր քան փարիսեցիին:

Եթէ Տէրը մեզ փորձելու համար իւր աչքը մեզ վերայ դարձնի, գուցէ մեզ հետ ևս նոյնը պատահի: Եւ շատերը, որոնք իբրև պատուաւոր մարդիկ, բարի քրիստոնեայ են ճանաչուած, որոնց ոչ ոք մեղքի մէջ մեղադրել չի կարող և նոյն իսկ իրենք իրենց որ և է նախատինքի արժանի չեն համարում և կանգնած են հպարտ իրենց ապահովութեամբ և առաքինութեամբ, Աստուծոյ առաջ կը ճանաչուեն իբրև անարդար: Իսկ շատ քչերը, որոնց մարդիկ ուշադրութեան արժանի չեն համարում, որոնք ազատ չեն արատից, նոյն իսկ իրենք իրենց անմեղ չեն համարում, կարժանանան կարեկցութեան և արդար կը դատուեն իրենց մաքուր սրտի և պարզ խոնարհութեան համար:

Վերև բերուած առակը հասարակական կարծիքի դէմ մի բացարձակ հարուած էր: Միթէ Փրկիչը իրաւունք չունէր չնայեալ այն մեծարանքներին որ փարիսեցիներն էին վայելում, նոցա դատապարտելու: Ո՞վ կը համարձակուէր նորա խօսքը կտրել և ասել թէ, Նա սխալում է: Այդ նոյն բերանը չպիտի մի օր քեզ դատի, ե՛վ մարդ: Ուստի զդուշացիք և քննիր քեզ և տես արդեօք փարիսեցուն նման չե՞ս:

Նա գնում է տաճար, Աստուծոն շնորհակալութիւն է յայտնում: Նա իրեն հեռու է պահում ամեն տեսակ մեղքերից, շարաթուայ մէջ երկու անգամ ծոմ է պահում, մի բարեգործ մարդ է: Միթէ սոքա բոլորը զովասանքի արժանի յատկութիւններ չեն: Քրիստոնեաներից քանիսին

կարող է դատապարտել նա այդ յատկութիւններից զուրկ լինելու համար: Աստուծոյ տունը նոցա համար մի այնպիսի տեղ է, ուր նոքա շատ քիչ են գնում: Նոքա աւելի դրադուած են իրենց աշխատանքով, իրենց առողջութեամբ ու վայելքներով: Որտեղ գիտութիւնն ու ճարտարագործութիւնն իրենց տաճարն ունին, այնտեղ նոքա հմուտ են և փորձառու, բայց սրբութիւնը նոցա համար օտար է: Կարծէք նոքա եկեղեցու, Աստուծոյ փառաբանելու, աղօթելու, շնորհակալութիւն անելու կարիք չեն զգում, այո՛, նոյն իսկ կարծէք երկնքում նոցա համար Աստուած գոյութիւն չունի: Գորա համար այս աշխարհը նոցա չէ դատապարտում և իրենք էլ իրենց պարսաւանքի արժանի չեն համարում: Սակայն ինչպիսի՞ դատաստան պիտի անէ սոցա Տէրը, որն այս աշխարհիս վերայ, իբրեւ հոգւոյ փրկութեան մի վայր, հիմնել է իւր եկեղեցին: Մի կեանք առանց Աստուծոյ և Փրկչի, առանց եկեղեցու և Աստուծոյ խօսքի և առանց աղօթքի է միանգամայն կորուսեալ կեանք: Ով ողորմածութիւնից հաստատապէս երես է դարձնում, արդեօք նորա վերայ չպիտի՞ կատարուի այն խօսքը, թէ՛ «ով ինձ է արհամարհում, ես էլ նորան պիտի արհամարհեմ»: Ով այստեղ Աստուծոյ դուռը չէ բաղխել, կարող է նա այնտեղ այդ դուռը բաց դնել: Ո՛չ, արդարեւ նոքա դռները փակ կը դնեն և ի դուր կը կանչեն. «Տէր, Տէր, բաց մեզ»:

Փարիսեցին արհամարհող չէր ոչ Աստուծոյ և ոչ աղօթքի: Նա աղօթում է, նա շնորհակալութիւն է յայտնում, բայց ի՞նչ ձեռով: «Ես շնորհակալ եմ քեզանից Տէր, որ ես չեմ այնպէս, ինչպէս միւսները, գող, աւաղակ, անարդար, շնացող...»: Նա Աստուծոյ օրէնքը շատ լաւ է ճանաչում և իրեն նորանով չափում: Բայց նա աւելի չափում է իրեն «միւս մարդկանց» համեմատութեամբ, թէ ինչպէս են նոքա գործում, ինչպէս վճիռներ տալիս: Մարդիկ մարդիկ, սոքա են նորա համար օրէնք և մարդարէք: Նա դո՛հ է դորանով, որ ժողովրդի կարծիքով չարագործ չէ: Արդեօք շատերը մեղանից ևս այսօր նոյն փարիսեցուն չեն նմանւում և ճիշտ այդ արտաքին բարոյականութեան հետե-

ւում: Այդպիսիները եթէ միայն կարողանում են ժողովրդին ներկայանալ իբրեւ արդար, երբ սղքա նոցա պատիւը շօշափող որ և է բան ասել չեն կարող, այն ժամանակ նոքա գոհ են: Գոհ են, երբ նոքա ոչ թէ գործով են ուրիշներին փնաս հասցրել, այլ իրենց չար լեզուով շատ անարդարութեանց պատճառ եղել: Գոհ են երբ նոքա ուղղակի շնացողներ չեն, թող նոցա սիրաբ ճահճի նմանի, նոցա հոգին անմաքուր մտածմանց կենարօն լինի, նոցա լեզուն լկախ խօսքերով ու հայեացքը՝ ինչպէս գողերինը ցանկութեամբ լի:

Արդեօք դու էլ այդպիսի ինքնագոհերից ես, ո՞վ մարդ, որոնք իրենց ուրիշների համեմատութեամբ են չափում և բաւականանում, երբ նոցա վերայ մարդկային աչքը ոչինչ անարդար բան չէ դնում: Զգոյշ եղի՛ր, գուցէ և փարիսեցուն նմանուելովդ, նորա նման ևս կը մերժուիս և կը դատապարտուիս: Քեզ ոչ թէ մարդկանց դատաստանով փորձիր, այլ Աստուծոյ, Փրկիչի խօսքի, նորանով թէ ինչպէս է Նա օրէնքը մեկնում, սովորիր, ինչ որ քեզանից պահանջւում է և չափիր քեզ նորանով, թէ դու արդեօք պատճառ ունի՞ս քեզանով գոհ լինելու և ինչպէս փարիսեցին՝ Աստուծուն հաշիւ տալու:

Իայց իրօք այստեղ էլ մեզ ամաչեցնում է փարիսեցու օրինակը: Մենք չգիտենք «ծոմապահութիւն» ժուժկալութիւն, չափաւորութիւն» Աստուծոյ և հոգւոյ ու ներքին կեանքի առողջութեան վերաբերութեամբ: Մենք պէտք է մեր հեշտակեաց, հաճոյասէր ժամանակի մէջ սանձահարները մեզ առաքեալի օրինակով, որ ասում է. «ես տկարացնում եմ մարմինս և սանձահարում նորան», և սովորաբար «նոքա են Քրիստոսին պատկանում», որոնք մարմինը իւր ցանկութիւններով և հաճոյքներով խաչում են: Գորա փոխարէն եթէ Տէրը մեր առաջ ծոմապահութիւն է դնում, հացը պակաս տարի բերում, երբ նա հիւանդութիւն է ուղարկում մեր աները և կամ մեր ունեցածը կորստեան մատնում, — մենք գթկամակում ենք, ինչպէս վատ կրթուած երեխաներ, որոնց ցանկութիւնը մերժուել է, լալիս ենք և տրանջում, զանգատում ենք և յուսահատում:

չենք կամենում հասկանալ, որ Տէր Աստուածը այդ պատիժները մեզ տալիս է, որպէս զի մեր հոգին փորձուի ու մաքրուի: Այն փարիսեցին իւր ունեցածից էր տալիս ինչ կապկասի եթէ մենք մեր ունեցածի տասերորդը զոհենք Աստուծոյ թաղաւորութեան և օտարի կարիքի համար: Ասենք թէ մեր քաղաքական և հասարակական զարգացած կեանքի զանազան տեսակի հարկերն ու վճարումները շատ շատ են, բայց եթէ դու հաշիւ անես, թէ քեզ համար քո հաճոյքիդ ու ցանկութիւններիդ համար ինչ ես ծախսելի իսկ քրիստոնէական զոհի համար ինչ արելի արդեօք աչքերդ գետն չես խոնարհեցնի և փարիսեցու հետ համեմատութեան մէջ մտնի: Եւ քանի՜ քանիսները կան, որոնք իրենց տուած չնչին ողորմութեամբ և կատարած զոհով իրենց փառաբանում են: Օ՛, մի գնար փարիսեցու ծանապարհով, մի ցանկանար հարուստ լինել, մինչդեռ դու խեղճ, կոյր և մերկ ես:

Եթէ դու կամենում ես շնորհք գտնել և Աստուծոյ ներկայութեան փորձանքից արդար դուրս գալ, այն ժամանակ քեզ մի բարձրացնիր, այլ խոնարհեցրու. խոնարհեցրու քեզ քո Ասածուդ առաջ, զարկիր մաքսաւորի նման կրճքիդ և խոտոտվանիր. «ես» իմ մարմինս ոչինչ է, այս երկրիս վերայ ինձ համար ոչ մի յոյս չկայ, եթէ Աստուած շնորհք չանէ և իմ հաղար ու մի տեսակ մեղքերս չենբէ: Ով իրեն խոնարհեցնում է, Աստուած էլ նորան բարձրացնում է, նորան չնայած իւր խեղճութեանը շնորհք է տալիս, չնայած նորա անարդարութեանը, ազատում է նորան ամեն տեսակ մեղքերից և Քրիստոսի կամքի համաձայն՝ իրրեւ իւր սիրելի որդի՝ իւր գոգն ընդունում:

Կանգնած է փարիսեցին ողորմածութիւնից զուրկ և սիրուց զատարկ: Մէկը միւսի հետ սերտ կապ ունի:

«Շնորհակալ եմ քեզանից, որ ես չեմ այնպէս ինչպէս ուրիշները և կամ ինչպէս այս մաքսաւորը», ասում է նա սառնասրտութեամբ մինչև իւր հոգու խորքը: Օտարի զրգախտութիւնը, փոխանակ նորա սրտի վերայ ազդելու, լինում է մի առիթ ներքին հատուցման: Ահա այդ էր փա-

ըխեցւոց իմաստութիւնը: Նոքա իրրեւ հպարտ սուրբեր՝  
ատում էին մաքսաւորին, իրրեւ բարոյական մարդիկ—սագու-  
կեցիներին, իրրեւ խառնէլի որդիք—հոովմայեցիներին, իրրեւ  
վարիչ՝ ժողովրդի ստորին դասակարգերին և վերջապէս իրենց  
բարոյականութեան հպարտ բարձրութեամբը և օրէնքի  
եռանդուն պաշտպանութեամբը—մի եռանդ մեռած տառի  
համար—ատում էին Աստուծոյ Որդուն, որ նոցա հեղու-  
թիւն էր քարոզում և նոցա դէմ յանդիման կանգնում  
հոգւով ու զօրութեամբ լի: Ահա այդպէս է լինում, երբ  
մարդ իրեն ուրիշներից աւելի լաւ է կարծում: Ուր խա-  
ւարն է իւր գլուխը բարձրացնում, այնտեղ սէրը տեղ չունի:  
Ահա հեռաւոր մի փնտր ինքնարդարացման: Ինչքան որ  
ինքնարդարացումը զրկում է մարդուն Աստուծոյ շնորհքից,  
նոյնչափ և դատարկում է նորա սիրտը սիրուց և դէպի իւր  
եղբայրակիցները անդուծ զարձնում:

Մեր մէջ իրօք բաւական մեծամիտներ կան, և շատերի  
համար մի անյարմար սրտուէր է. «ով իրեն կը խոնարհեցնի,  
նա կը բարձրանայ»: Կարծէք մեր ժամանակին է վերապահ-  
ուած յատկապէս քրիստոնէութիւնը իրրեւ ինքն խոնար-  
հեցնող ու ծառայութիւնից ազատող կրօն, իւր պահանջած  
հեղութեան համար ծաղրի ենթարկել: Աւ այն տեղ, ուր  
մարդ հեռու է հեղութիւնից, ինչպէս նա իւր սրտի խոր-  
քերում իրեն իւր նմաններից զերազատում է: Մէկը հը-  
պարտ է իւր ծագմամբ, ուրիշը իւր հարստութեամբ կամ  
զարգացմամբ և կամ զիրքով, մի կուսակցութիւնը ատում  
է միւսին և հպարտ է իրենով և իւր սկզբունքներով: Նոյն  
խիկ համետը մի որ և է առիթ ունի հպարտանալու: Մարդ  
բարիք է կատարում իւր բարեպաշտութիւնից զրդուած,  
հաւատի հիման վերայ, բարեգործութիւնից, Աստուծոյ թա-  
ղաւորութեան և եկեղեցու միութեան համար ունեցած  
եռանդից: Բայց իսկական արժանիքի ոչ մի ճանաչողութիւն:  
Եւ ամեն տեղ, ուր որ այս պատահում է, ուր որ մարդ  
մոռանում է որ «Աստուծոյ ողորմութեամբը ես կամ—զո-  
յութիւն ունիմ», այնտեղ փակոււմ է նոցա սիրտը այն  
մարդկանց համար, որոնցից մարդ իրեն զերազատում է:

Այն խոնարհ ինքնագիտակցութիւնը, որ—սա մի շնորհք է, որ ես ապրում եմ օր օրի վերայ—մարդկանց միմեանց մօտեցնում է, խաղաղութեամբ վերջացնում նոցա մէջ եղած տարբերութիւններն ու հակառակախօսութիւնները: Պարծենկոտութիւնը և ինքնարդարացումը ստեղծում են մի անջրպետ մարդկանց մէջ:

Զգուշացիր փարիսեցիների խմորից, ինչպէս կորսաւրեր ժանտախտից և վերցրու քեզ մաքսաւորին օրինակ: Ճանաչիր քո պակասութիւններն ու մեղքերը, որոնցից իրօք դու ազատ չես, ծեծիր ցաւագին կուրծքդ և դու կը սովորես ներողամտութեամբ նայել ուրիշների վերայ, կը մօռանաս անգթօրէն դատել ու դատապարտել, քո թոյլ վիճակիդ զգացնել կտաս եղբօրդ անկեալ դրութիւնը և օրանդ օր դու պիտի պատժես, գործ կը ցնես քաղցրութիւն: Ար լինես բարեացակամ, ողորմածութեան և խաղաղասիրութեան, հաշտութեան և ներման, և փոխանակ ուրիշների մոլորութեան վերայ չարանիւթ ուրախանալու, դոքա կլինին քեզ համար մի խթան նոցա օգնելու համար: Այսպիսի մի համեստ, տաք և քրիստոնէի սիրտ ես կրում քո մէջ, ով մարդ, թէ դու սառն ես ու սիրուց զուրկ, ինչպէս փարիսեցին: Թող բացուին քո աչքերդ քեզ համար և քեզ դէպի խոնարհութիւն ու հեղութիւն առաջնորդեն: Ահա այս է ծանապարհը դէպի Աստուծոյ շնորհքը և դէպի եղբայրների սէրը:

Դեմք. քաղ. Ա. Վ.

## Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ

Այս տարի սովորական հանդիսաւորութեամբ կատարուեց կաթողիկէ՝ ս. Էջմիածնի տօնը: Պատարագի սկզբին ծերունազարդ Վեհափառ Հայրապետն ամբողջ միաբանութեան գլուխն անցած իջաւ տաճարը և սկսուեց